

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԻՐԼԻՈԳՐԱՖԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ «ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ¹

Ի. Վ. Ստալինը, ստեղծագործորեն լուծելով լեզվաբանության հիմնական պրոբլեմները, իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ ևս ճշգրիտ, ճշմարիտ, ճշմարտության հարցերը, իրենց մարքսիստական լեզվաբանության կայուն հիմքերը, սովետական լեզվաբանության զարգացման նոր էտապի սկիզբը:

Սալառիչ կերպով լուծելով լեզվաբանության տեսական կարևորագույն հարցերը, ընկեր Ստալինը միաժամանակ ցույց տվեց այն ուղին, որով պետք է ընթանա սովետական լեզվաբանությունը և զրավի առաջին տեղը համաշխարհային լեզվաբանության մեջ:

Ընկեր Ստալինը սովետական լեզվաբաններից պահանջում է՝ արագորեն լիկվիդացնել արակշեկյան ուժերը, վճռապես հրաժարվել Ն. Յա. Մառի սխալներից և մարքսիզմը ներդրել լեզվաբանության մեջ:

Առաջնորդի ու մեծագույն գիտնականի այս պահանջներն այժմ դարձել են նշանաբան յուրաքանչյուր լեզվաբանի համար և չափազանց պատասխանատու ու պատվավոր պարտականություն դրել մեզ վրա:

Լեզվի ինստիտուտը մեր ռեսպուբլիկայի լեզվաբանական մտքի կենտրոնն է, նրա ավանդարդ ջոկատը: Առաջին հերթին հենց նա պետք է լուծում տա լեզվաբանական ու հայագիտական պրոբլեմատիկ բազմաթիվ հարցերի, նա պետք է գլխավորի լեզվաբանական միտքը մեր ռեսպուբլիկայում և հիանալի օրինակ տա մարքսիստական ուսումնասիրություն:

«Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» վերնագիրը կրող գիտական աշխատությունների ժողովածուն չափազանց կարևոր նշանակություն ունի ոչ միայն Լեզվի ինստիտուտի, այլև, ամենից առաջ, հենց մեր ռեսպուբլիկայի կյանքում, լեզվաբանական գիտության զարգացման համար: Աշխատությունների ժողովածուն մեկն է ինստիտուտի այն միջոցներից, որով նա պետք է ուղղորդվում և ընթացիկ տա լեզվաբանական ուսումնասիրություն կատարողներին, կիրառելով մարքսիզմի կլասիկների ծրագրային գիտողություններն ու դրույթները՝ առաջ տանի և զարգացնի ստալինյան լեզվաբանական ուսմունքը, խիստ քննադատության ենթարկի բուրժուական լեզվաբանության, Ն. Յա. Մառի և, այսպես կոչված, լեզվի «նոր ուսմունքի» հետևորդների սխալները, ճշտի հայ լեզվագիտության ասպարեզում եղած սխալ մեկնաբանությունները և զաղափարապես հագեցած ու հիմնավոր փաստերով լուսարանի ժամանակակից լեզվական հարցերն ու սովետական լեզվաբանության ձեռք բերած նվաճումները:

Ընչ խոսք, որ ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածուի առաջին հատորն ընդհանուր առմամբ հաջողությամբ է արձագանքել այս հրատապ խնդիրներին: Ահա հենց այս էլ պետք է համարել ժողովածուի առաջին և գլխավոր արժանիքներից մեկը:

«Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» առաջին հատորի մեջ գետեղված հոդվածները հիմնականում հաջողված են. նրանց մեջ առաջ են քաշված և քննված են լեզվաբանական ու հայագիտական կարևորագույն մի շարք հարցեր, ստալինյան լեզվաբանական ուսմունքի ոգով վերանայված ու ճշտված են մի քանի դրույթներ, ու տեսակետներ, հիմնավոր ու ճիշտ լուծում են ստացել որոշ խնդիրներ:

¹ «Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ», Երևան, 1951:

Վերջապես, ժողովածուի անառնականության արժանիքներից մեկն էլ այն է, որ նրանում առաջին անգամ իրենց դիտական աշխատություններով հանդես են եկել մի քանի երիտասարդ լեզվաբաններ:

«Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ» առաջին հատորը սկսվում է պրոֆ. Գր. Ղափանցյանի «Ստալինյան ուսմունքը լեզվի մասին և հայագիտության մի քանի խնդիրներ» արժեքավոր աշխատությամբ, որի մեջ պրոֆ. Գր. Ղափանցյանը ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» դարադուրս կազմող աշխատության գրություններից ելնելով՝ առաջ է քաշում հայագիտական կարևորագույն մի շարք հարցեր և համառոտ, բայց հիմնավոր ու համոզիչ պատասխաններ տալիս նրանց:

Գնահատելի է հատկապես այն, որ պրոֆ. Ղափանցյանը հաջող է կիրառում ստալինյան հանճարեղ գրությունները լեզվաբանական ու հայագիտական այս կամ այն հարցը քննելիս կամ առաջ քաշելիս: Հիմք ընդունելով բառային կազմի մասին ստալինյան հայտնի գրությունը, պրոֆ. Ղափանցյանը միանգամայն ճիշտ կերպով ասուող նկատմամբ ցուցաբերում է պատմական մոտեցում, հիմնավորում է բառային կազմի մեջ տեղի ունեցող փոփոխության ներքին և արտաքին պատճառները, բացահայտում է տարբեր ժամանակաշրջաններ, տարբեր կուլտուրական աստիճաններ և կամ ազդեցություններ արտացոլող բառափոխության պատմական մեծ նշանակությունը, պարզում է լեզվի բառային հիմնական ֆոնդի (և բերականական կառուցվածքի) պատմա-համեմատական ուսումնասիրության կարևոր դերը ժողովրդի էթնոգենեզի խնդրի լուծման մեջ:

Պրոֆ. Ղափանցյանը նշում է, որ հայոց լեզվի բառային կազմի և հիմնական ֆոնդի ուսումնասիրության ուղղությամբ արված է ոչ քիչ բան: Նա առանձնապես գնահատում է պրոֆ. Հր. Աճառյանի «Լեռնատառերի բառարանը» և պրոֆ. Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», սակայն նա միաժամանակ ճիշտ կերպով նշում է, որ դրանցով երբեք չի կարելի ավարտված համարել հայոց լեզվի բառային կազմի ու հիմնական ֆոնդի ուսումնասիրությունը, որ դրանք, մանավանդ առաջինը, այնքան էլ հարմար չեն գործնական ու մասսայական օգտագործման տեսակետից, որ դեռևս մենք կարիք ունենք ստալինյան ուսմունքի ողով զրկված, բարձրորակ ու մատչելի նոր բառարանների:

Պրոֆ. Ղափանցյանը առաջնահերթ կարևոր խնդիրներից մեկն էլ համարում է հայոց լեզվի բերականական կառուցվածքի ուսումնասիրությունը:

Մինչև այժմ մենք չունենք մեր լեզվի պատմական բերականությունը, չի հրապարակված բերականական որևէ կատեգորիայի մանրակրկիտ ուսումնասիրություն: Այսօր էլ մեզ հետաքրքրում են հայոց լեզվի բերականական կառուցվածքի զարգացման պատմական ընթացքը, նրա օրինաչափությունները: Հասկանալի է, որ մեր լեզվի բերականության ուսումնասիրությունը դարձել է անհետաձգելի, և միանգամայն իրավացի է պրոֆ. Ղափանցյանը, երբ այդ հարցի վրա էլ բևեռում է հայ լեզվաբանների ուշադրությունը:

Պրոֆ. Ղափանցյանի նախորդ բոլոր աշխատությունների, ինչպես և այս հոդվածի մեջ, կարմիր թելի պես անցնում է մի ընդհանուր գիծ, քննելով մեր լեզվի պատմության այս կամ այն հարցը, նա միշտ կապում է այն մեր ժողովրդի պատմության հետ: Հենց այդպիսի մոտեցում է պահանջել ընկեր Ստալինը իր հանճարեղ աշխատության մեջ, մի չափազանց կարևոր պահանջ, որ երբեմն մոռանում են որոշ լեզվաբաններ:

Քոստելով արդի հայ գրական լեզվի կազմավորման հարցի մասին, պրոֆ. Ղափանցյանը միանգամայն ճիշտ կերպով գտնում է, որ նրա հիմքում ընկած է Արարատյան բարբառը (բայց ոչ բարբառների որևէ խառնուրդ)՝ դարձրելով բառապաշարի որոշ օգտագործումով: Այս հաստատվում է մեր ժողովրդի պատմությամբ և այստեղ հաշվի են առնված մեր լեզվի կազմավորման ռեալ պրոցեսն ու նրա ստրուկտուրան:

Հիմնավորելով հայ բարբառների արագ ուսումնասիրության անհրաժեշտությունը, պրոֆ. Ղափանցյանը ճիշտ կերպով պահանջում է քննադատորեն վերանայել Ն. Մարի հայագիտական ժառանգությունը, խուսափել միակողմանի, ծայրահեղ մոտեցում ունենալուց, վճռապես հրաժարվել դիտության համար խորթ և անընդունելի հապճեպ եզրակացություններ հանելուց և հայագիտությունն առաջնորդել մարքսիստական ողով զրկված, դիտական փաստերով հարուստ ու արժեքավոր մենագրություններով և ուսումնասիրություններով:

Քննադատելով հին հայագետներին այն բանի համար, որ նրանք հայոց լեզվի դե-
նեգիսի խնդրում շեշտը դրել են նրա հնդեվրոպական «շերտի» վրա, իսկ ոչ հնդեվրոպա-
կան տարրերը համարել են «փոխառություններ», «ազդեցություններ» և այլն, պրոֆ. Ղա-
փանցյանը այն միտքն է հայտնում, որ ոչ հնդեվրոպական լեզվական տարրերը մեր լեզ-
վի մեջ անհամեմատ շատ են, քան հնդեվրոպականը (էջ 13): Պրոֆ. Ղափանցյանի այս
կարծիքը կարոտ է հիմնավորման: Պատմա-համեմատական մեթոդով կատարված ուսում-
նասիրությունները գոնե մինչև այժմ ոչ թե հայտարարել, այլ, մեր կարծիքով, ապացու-
ցել են հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը: Չժխտելով հանդերձ, որ նախկին Հայաստանի
լեզուն դարձավ մեր լեզվի հիմքը, մենք այն կարծիքին ենք, որ այդ հայաստական լեզուն
հենց իր բնույթով հնդեվրոպական է, որի բառային կազմը հարստացել է վրացական, խու-
ռիտական (արմինական)-ուրարտական և այլ լեզուների բառային կազմի հաշվին:

Լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցին է նվիրված ժողովածուի
հոդվածներից մեկը, որ դրել է ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Մովսիսյանը: Հոդվածի վերնա-
դիրը «Вопросы языка и мышления в свете трудов И. В. Сталина о языке» ցույց
է տալիս, որ հեղինակը վեցրել է ընդհանուր լեզվաբանական բնույթ ունեցող բավակա-
նաչափ դժվարին հարց: Որքան մեզ հայտնի է, ընկեր Ստալինի լեզվաբանական աշխա-
տություններից հետո, այս հոդվածը մեզ մոտ առաջին տպագիր աշխատությունն է՝ լեզվի
և մտածողության փոխհարաբերության հարցին նվիրված և հենց այս տեսակետից էլ գնա-
հատելի է նրա հրապարակումը:

Հայտնի է, որ անցյալում Հայաստանի ամենահետևողական մտածողներից մեկը
եղել է ընկ. Ա. Մովսիսյանը: Նա գրավոր և բանավոր զեկուցումներով և տպագիր հոդ-
վածներով երկար ժամանակ պրոպագանդել է Ն. Յա. Մառի, այսպես կոչված, «լեզվի նոր
ուսմունքը»: Ընկ. Մովսիսյանի այս հոդվածը ցույց է տալիս, որ նա մասամբ գիտակ-
ցում է իր նախկին սխալները: Նա առաջին անգամ փորձել է լեզվի և մտածողու-
թյան հարցը քննել ոչ թե Ն. Մառի իդեալիստական ուսմունքից ելնելով, այլ մարք-
սիզմի կլասիկների դրույթների հիման վրա, վերջապես նա առաջին անգամ փորձել է
քննադատական խոսք ասել Ն. Յա. Մառի դոեհիկ-մատերիալիստական հայացքների նկատ-
մամբ:

Ընկ. Մովսիսյանն ընդհանուր առմամբ ճիշտ դիրքերից է քննադատում բուրժուա-
կան մտածողների (Մաքս Մյուլլեր, Ուայտհեդ, Ռասել և այլն) իդեալիստական հայացք-
ները լեզվի և մտածողության հարցի մասին:

Վերջապես, ընկ. Մովսիսյանի հոդվածում հաջող են շարադրված Մարքսի, Էնգելսի,
Լենինի, Ստալինի տեսակետներն ու դրույթները լեզվի և մտածողության փոխհարաբե-
րության հարցի մասին:

Ընկ. Ա. Մովսիսյանի հոդվածի մեջ կան որոշ թերություններ:

Հեղինակը քննել, ավելի ճիշտ՝ շոշափել է այնքան շատ հարցեր, որոնց մասին ան-
հնար է մի փոքրիկ հոդվածի մեջ շատ թե քիչ ամփոփ խոսք ասել: Այստեղ առաջ են քաշ-
ված մարքսիզմի կլասիկների հայացքները լեզվի, մտածողության, գիտակցության մա-
սին, լեզվի, մտածողության և գիտակցության առաջացման, ձևի և բովանդակության,
ի. Պ. Պավլովի ազդանշանային սխեմայի, բուրժուական լեզվաբանների և Ն. Յա. Մառի
սխալ հայացքների, հասկացական կատեգորիաների, տրամաբանական ու քերականական
կատեգորիաների փոխհարաբերության և այլ հարցեր: Հասկանալի է, որ հոդվածի վերնա-
դիրը, որ շատ ընդհանուր բնույթ ունի, ստիպել է հեղինակին շոշափել շատ հարցեր և
հնարավորություն չի տվել խորանալու դրանց մեջ: Հենց դրա հետևանքով էլ ընկ. Մով-
սիսյանը յուրաքանչյուր հարցի վրայից սահում է, չի խորացնում առաջ քաշված թեկուզ
որևէ հարց և մեծ մասամբ բավարարվում է հանրահայտ մեկ-երկու գիտություննե-
րով կամ մեջբերումներ անելով: Անկասկած, հոդվածն ավելի կշահեր, եթե հեղինակը վերց-
ներ կոնկրետ մեկ-երկու հարց և գոնե բավարար չափով խորանար դրանց մեջ: Ամրող
հոդվածից չի կարելի իմանալ, թե ի վերջո, որոնք են լեզվի և մտածողության սպեցի-
ֆիկ առանձնահատկությունները: Ըժշտ է, հեղինակը հայտարարում է, որ չի կարելի լե-
զուն կտրել մտածողությունից, չի կարելի դրանք նույնացնել իրար հետ, իսկ թե ինչպես
է հանդես գալիս դրանց կապը, ինչպիսի առանձնահատկություն ունի դրանցից յուրաքան-
չյուրը, այս, մեր կարծիքով, ամենահիմնական հարցերը մնում են անպատասխան:

Իրավացիորեն քննադատելով բուրժուական լեզվաբաններին, Ն. Յա. Մառի, մա-
սամբ նաև Մեշչանինովի իդեալիստական և հակապատմական հայացքները լեզվի և մտա-

ծողողության մասին, ընկ. Ա. Մովսիսյանը՝ քննադատական ոչ մի խոսք չի ասել Վեդվի նոր ուսմունքն՝ անվերապահորեն ընդունող հայ լեզվաբանների մասին: Ճշգրիտ մեզ մոտ նույնպես դրվել ու հրապարակվել են մի շարք հոդվածներ և նույնիսկ մենագրական աշխատություններ, որոնց մեջ լեզվի և մտածողության հարցերը քննվել են Վեդվի նոր ուսմունքի՝ դիրքերից, խորացվել և յուրահատուկ ձևով ընդունվել է մասական կոնցեպցիան, կիրառվել են մտածողության զարգացման մասական ստադիաների (կոսմոկական, միկրոկոսմիկական, ֆորմալ-տրամարանական, տրամարանական), մտածողության դասակարգայնության, լեզվի և մտածողության կապը խզող հասկացական կատեգորիաների, անջատական, կցական, թեքական և թեքա-կցական մտածողությունների և նման շատ ուրիշ իդեալիստական, հակադիտական ու հակապատմական տեսությունները: Ընկ. Մովսիսյանը այս ամենի կողքով անցել է լուծյամբ: Հեղինակը ոչ միայն խուսափել է քննադատությունից, այլև ինքնաքննադատությունից: Հայտնի է, որ մառյան իդեալիստական ուսմունքի ոգով ուսումնասիրություններ է կատարել նաև ինքը: Վերցնենք թեկուզ նրա դիտարկումն աշխատությունը՝ «О некоторых пережитках первобытного мышления в армянском языке», որը տպագրվել է Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածուի» 2-րդ հատորում, 1947 թվականին: Ինչպես կարելի է հակադիտական ու հակապատմական, ըստ էության իդեալիստական այս աշխատությունից հետո ստալինյան ուսմունքի ոգով գրել նոր հոդված, քննադատել այն աղբյուրները, որոնցից օգտվել է ինքը և ոչ մի խոսք չասել սեփական սխալների մասին:

Ընկ. Մովսիսյանի հոդվածում կան նաև սխալ և ոչ հստակ ձևակերպումներ: Այսպես, օրինակ՝ նա գրում է. *Связывая язык с мышлением, Марр, естественно, относит к надстроечным явлениям и мышление человека...* և այլն: Մեկ ուրիշ տեղ. «Следовательно, признавая связь языка и мышления для прошлых и современных эпох, Марр отрицает роль языка...» և այլն (էջ 33. ընդգծումները մերն են — Ա. Գ.):

Այս ձևակերպումները սխալ են: Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ Վ. Յա. Մառը մտածողությունն անջատում է լեզվից (Բ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1951 թ., էջ 89):

Հասկանալի է, որ հոդվածագիրը ստալինյան այս հստակ դրույթից հետո պետք է Ն. Յա. Մառին խիստ քննադատեր հենց այս հարցում, լեզուն մտածողությունից կտրելու հարցում, մինչդեռ ընկ. Մովսիսյանը նորից շարունակում է լուրջ սխալ թույլ տալ, հայտարարելով, թե Ն. Մառը Վեդուն կապում էր մտածողության հետ, թե նա ընդունել է Վեդվի և մտածողության կապը:

Հոդվածում շոշափված մի քանի հարցեր, ինչպես, օրինակ՝ մտածողության և աշխարհայացքի, տրամարանական և քերականական կատեգորիաների փոխհարաբերության և այլն, կարիք ունեն ճշտման ու պարզաբանման: Հոդվածում այս մասին կան միայն անորոշ, մշուշապատ ձևակերպումներ:

Հայերենի և վրացերենի բառային ընդհանրությունների հարցին է նվիրված Ֆիլ. դիտ. դոկտոր Ա. Մուրվալյանի «Հայ-վրացական բանասիրության մի քանի հարցերի շուրջը» հոդվածը:

Լեզվական ընդհանրությունների ուսումնասիրությունը, մանավանդ այժմ, շատ կարևոր ու արժեքավոր խնդիր է, ուստի ընկ. Մուրվալյանի՝ այս ուղղությամբ կատարած հետազոտական աշխատանքը ուշադրության արժանի է: Առանձնապես գնահատելի է այն, որ ընկ. Մուրվալյանը պրպտում, հավաքում է բավականաչափ նյութ, երբեմն հաջողությամբ մշակում է այն, անում հետաքրքիր և հենց հայադիտության համար ուշագրավ դիտողություններ:

Այս հոդվածի մեջ հեղինակը առաջին անգամ փորձել է հայ-վրացական լեզվական ընդհանրությունները քննել ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույսի տակ, բայց այդ նրան հաջողվել է մասամբ միայն:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ «Քաղաքական և կուլտուր-տնտեսական կապերը լեզվական կոլեկտիվների միջև միշտ էլ անխուսափելի են: Այդ կապերը, նախ և առաջ, դրսևորվել են լեզվական կոլեկտիվների միջև՝ բառերի անցումներով ու յուրացումներով: Այդ է պատճառը, որ այս կամ այն բառը միաժամանակ գտնվում է մի քանի լեզվում: Այսպես, օրինակ, մի շարք բառեր գտնվում են հայերենում, վրացերենում և հնագույն մեռած մի շարք լեզուներում (օր.՝ խեթերենում, խուրիտերենում և այլն): Յուր այս ճիշտ միտքը ընկ. Մուրվալյանը հաստատում է բառային մի քանի օրինակներով, ինչպես

«հյ. աղանձ-ել, որ նշանակում է քրովել, խարկել, մրկել» և վրց. աղանձ-վա (աղանձ-վա) «վառել, խանձել»: Սրանք էլ իրենց հերթին նույնն են խեթ. aland (լամ land) նույնիմաստ բառերի հետ», էջ 42):

Սակայն ընկ. Մուրվալյանի այս հոգիվածում քիչ չկան լուրջ սխալներ, թերու-թյուններ:

Ըր հոգիվածի վերջում ընկ. Մուրվալյանը հակադրվում է Մեյի այն կարծիքին, որ հայերենը «հնդեվրոպական լեզու է» (էջ 55): Եթե հնդինական համոզված է, որ հայերենը հնդեվրոպական չէ, ապա այն դեպքում ինչպիսի լեզու է համարում նա: Նկատենք, որ իր հոգիվածում այս մասին որոշակի ոչինչ չի ասում: Անցյալում ընկ. Մուրվալյանը հա-յոց լեզուն համարում էր խաչավորված լեզու (խոսքը, իհարկե, խաչավորման մասական ըմբռնման մասին է): Պետք է ասել, որ մասական շունչը երևում է նաև այս հոգիվածում: Եթե հավատանք հնդինակի հայտարարությանը, «հայոց և վրաց լեզուների թուր ընդհան-րությունները, այն է՝ ընդհանուր բառերն ու բառարմատները, մասնիկները, ածանցները և այլն՝ հասնում են շուրջ 3000-ի» (էջ 53):

Երբ քննում ենք այդ, այսպես կոչված, ընդհանրությունների որակը, տեսնում ենք, որ դրանք իրենց մեծագույն մասով հայերենի բառային հիմնական ֆոնդի բառեր կամ արմատներ, հոլովական վերջավորություններ, բառաստեղծական ածանցներ են, այլ կերպ ասած՝ այդ «ընդհանրությունները» հաստատում են Ն. Յա. Մառի հետևյալ թեզը, որ ըստ. Մուրվալյանը մեջ է բերել իր մի այլ աշխատության մեջ. «Վրաց ֆեոդալական լեզուն ըստ սխտեմի ազելի մոտ է կանգնած հայոց ֆեոդալական լեզվին, քան նրանցից յուրաքանչյուրը, իր հարազատ երկրի ժողովրդական լեզվին, և այս հարաբերությամբ իրենց ֆեոդալական լեզուների նկատմամբ, ինչպես հասկանալի է, հայոց և վրաց ժողո-վրդական լեզուները հանդիսանում են մի սխտեմի լեզուներ իրենց տիպաբանական հիմնական շատ պծերով» («Աշխատությունների ժողովածու», 1949 թ. հատ. 4-րդ, էջ 79):

Ինձ թվում է, որ ընկ. Մուրվալյանի մոտ լեզվական ընդհանրությունները հաս-նում են չափազանցությունների, դրանք որոշ չափով չարաչանվում են: Այսպես, օրինակ՝ նա դրում է, որ «հյ. ա]նուսո բառի հնչյունական այլ տարբերակն է վրց. էնծեր ([է]ն) ծեւ-ի» պուրակ-թփուտ» (էջ 42):

Պրոֆ. Հր. Աճառյանը հայերեն տիկ բառը հիմնավոր կերպով համարում է հնդեվրո-պական, ցույց տալով, որ այդ բառը «այծ, այծիկ, ուլ» իմաստով և հնչյունական նույն կազմով կան հնդեվրոպական (հունարեն, գերմաներեն, անգլոսաքսոներեն և այլ) լեզու-ներում: Ընկ. Մուրվալյանը մերժելով պրոֆ. Աճառյանի ճիշտ կարծիքը, հայերեն տիկ բա-ռը կապում է կովկասյան կամ քարթվեկական լեզուների հետ, բայց չի կարողանում հիմնա-վորել այդ:

Քնդիրն այն է, որ տարբեր լեզուների բառերի հնչյունական (իսկ երեքն նաև իմաստային) նմանությունները հաճախ կարող են պատահական բնույթ կրել:

Անհամոզիչ և սխալ է հնդինակի բացատրությունը հայոց լեզվի հոլովական մի քա-նի վերջավորությունների վերաբերյալ, օրինակ՝ հայերեն ով գործիականի և վրացերեն րառամիջում եղած ով-ի իբր թե ընդհանրությունը (էջ 49), հյ. ից (քաղաքից) վրց. իթ (քաղաք-իթ) և այլն:

Այստեղ նկատենք, որ ընկ. Մուրվալյանի ներկայացրած հնչյունական ու իմաստա-բանական համապատասխանությունները հայ և վրաց լեզուներում, ոչ այլ ինչ են, բայց եթե մասական գեսիբիլացիայի, գեղասպիրացիայի, համապատասխանության, հաջորդա-փոխության և ստուգաբանական իլուստրացիան:

Ընկ. Մուրվալյանը այս հոգիվածում ևս շարունակում է անտեղի հարձակումներ գոր-ծել պատմա-համեմատական մեթոդով զրված աշխատությունների, հատկապես պրոֆ. Հր. Աճառյանի ուսումնասիրությունների վրա: Հայտնի է, որ այդ մեթոդով զրված աշխա-տություններն անթերի չեն, նրանց մեջ կան լուրջ սխալներ: Անկասկած, դրանք պետք է բացահայտվեն և քննադատվեն: Սակայն պատմա-համեմատական մեթոդով զրված աշխա-տությունները հիշել միայն նրա համար, որ նրանցում լեզվական ընդհանրությունները «բնականաբար խաբուսիկ են», այս նշանակում է ցուցաբերել միակողմանի մոտեցում:

Մենք կարծում ենք, որ ընկ. Մուրվալյանը շատ է չափազանցում ածանցների ու մասնիկների փոխառության խնդիրը: Նա հոլովական վերջավորությունների (ով, ից) նման հայերենի փոքրացուցիչ մասնիկները (ակ, իկ, ուկ) մեխանիկորեն կապում է քարթ-

վեցական լեզուների հետ, անտեսելով մեր լեզվի կառուցվածքը և նրա զարգացման ներքին օրինաչափությունները:

Ընկ. Մուրվալյանի հետազոտական աշխատանքի մեջ բացակայում է պատմական մոտեցումը, նրա ուսումնասիրության մեթոդը տառապում է սխեմատիզմով:

Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է որ «...լեզուն և նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն, և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը» (Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 49):

Ելնելով ստալինյան այս հանճարեղ դրույթից, ընկ. Մուրվալյանը լեզվական փաստերին պետք է մոտենար, դրանք քննել պատմականորեն, խմբավորել ու դասգասել հայ-վրացական լեզվական ընդհանրությունները, ցույց տալ, թե ինչ բառեր են վրացերենից անցել հայերենին, ինչպիսի բառեր հայերենից՝ վրացերենին, թե ինչ բառեր մեկ այլ՝ երրորդ աղբյուրից են անցել և՛ վրացերենին, և՛ հայերենին, պատմական որ ժամանակաշրջանում, ինչ պատճառով և այլն:

Նկատելի է, որ ընկ. Մուրվալյանը քննադատաբար չի մոտենում այն աղբյուրներին, որոնցից նա օգտվում է:

Հեղինակը լեզվական ընդհանրությունների համար վերցնում է նաև բնածայնական բառեր (կուկու, հոպոպ, բու և այլն): Նախ՝ բնածայնական բառերի հիման վրա երբեք չի կարելի լեզվական ընդհանրություն ցույց տալ, քանի որ աշխարհի լեզուների մեծ մասում այդ բառերն իրար նման են: Բնածայնական բառերի օրինակներով հաստատել լեզվական ընդհանրություններ, այդ նշանակում է լեզվական ընդհանրություններ որոնել ոչ միայն հայերենի ու վրացերենի միջև, այլև աշխարհի լեզուների մեծ մասի միջև:

Ընկ. Մուրվալյանը այս հոգվածում բոլորովին չի քննադատել իր նախորդ աշխատությունների մեջ եղած սխալները, որոնցից մեկի մեջ նա գրել է. «Հայոց բազմաթիվ լեզվատարների ճիշտ յուսարանման գաղտնիքների բանալին Ն. Մառը տալիս է բոլոր նրանց, ովքեր զբաղվում են լեզվի նոր ուսմունքով, լեզվի նոր պատմությամբ, հայ-վրացագիտությամբ: Այդ բանալիով միայն հնարավոր է բանալ հայոց լեզվի շատ գաղտնիքները և թափանցել նրանց խորքերը...» (Աշխատությունների ժողովածու, 1946 թ., հատ. 1-ին, էջ 220):

Հեղինակը փոխանակ դեն նետելու այդ բանալին, իր այս հոգվածում շարունակում է ընթերցողին անընդհատ մատնացույց անել յուր մառական նախկին հոգվածները, որոնց մեջ, այսպես կոչված, լեզվի նոր ուսմունքի դիրքերից քննադատված են պատմա-համեմատական մեթոդով կատարված ուսումնասիրությունները: Հոգվածի տողատակում կարդում ենք.

«Այս հարցերը (խոսքը հայ-վրացական լեզվական ընդհանրությունների մասին է — Ա. Գ.) մանրամասնորեն ուսումնասիրված են իմ «Հայերենի բառերը և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ» աշխատության մեջ, որից մի երկու հատված տպագրված է համառոտակի Պետ. համալսարանի Մառի կարիքների աշխատությունների № 2-ում և ԳԱ «Տեղեկագրի» № 3-ում»:

Մեկ ուրիշ տեղ՝ «Թե ինչպես է օգտագործված վրացերենը պրոֆ. Աճառյանի մոտ, կարելի է տեսնել իմ գրախոսականը՝ «Ինչպես է օգտագործված վրացերենը Հ. Աճառյանի «Արմատական բառարանում»:

Մի այլ տեղ՝ «Այս և մյուս մասնիկների մասին մանրամասն խոսված է իմ «Հայերենի մասնիկները և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ» աշխատության մեջ (տես Հայկական ՍՍԻ ԳԱ Լեզվի ինստիտուտի 1949 թ. Աշխատությունների ժողովածու, հատ. 4-րդ):

Վաղուց արդեն հասել է ժամանակը, որ ընկ. Մուրվալյանը արմատապես փոխի իր ուսումնասիրության մեթոդը և հայ-վրացական լեզվական ընդհանրություններն այսուհետև քննի՝ կլասիկ ունենալով ստալինյան լեզվաբանական ուսմունքը:

«Աշխարհարարի հնչունափոխության օրինաչափությունները» հոգվածով ֆիլ. գիտ. թեկնածու Վ. Առաքելյանը նպատակ է ունեցել քննել չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի հարց՝ հնչունափոխական երևույթները արդի հայ գրական լեզվի մեջ:

Հուլիսի է, որ հայ բերականության պատմության մեջ քիչ հեղինակներ չեն քննարկում նյութի վարձերը մեր լեզվի հնչյունական իրողությունները, նրանցից ոմանք.

(սլոբո՞ւ. Մ. Արեղյան և ուրիշները) ոչ միայն մանրամասնորեն քննել են հնչյունաբանական երևույթները, այլև աշխատել են որոշ սխառմի տակ դնել զրանք, հանել եղբայրացություններ, սահմանել օրենքներ: Այս, իհարկե, չի նշանակում, թե այդ ուղղությամբ կատարված աշխատանքը եղել է սպառնալիչ, թե նրանում չեն եղել թերություններ ու սխալներ, թե ամբողջությամբ պարզված են մեր լեզվի հնչյունափոխության օրինաչափությունները: Այս իմաստով, ահա, ընկ. Առաքելյանի հոդվածը և՛ կարևոր է, և՛ ուշադրավ:

Հեղինակը իր հոդվածում առաջին անգամ փորձ է արել փաստական հարուստ նյութի հիման վրա ի մի բերել հայոց լեզվի հնչյունափոխական բազմաթիվ երևույթներ, խմբավորել և ձևակերպել զրանք որոշ օրենքներով: Որքան մեղ հայտնի է, ընկ. Առաքելյանը առաջինն է, որ տալիս է:

1. Ու և ի-ով միավանկ բառերի և արմատների հնչյունափոխության օրենքը՝ նկատի ունենալով 7 հիմնական մոմենտ. ա) բառը այս կամ այն բարբառից երբ է անցել զրանի, բ) զրաբարից երբ է անցել, գ) օտար բառ է, դ) հոգնակի կազմում է, ե) բարդվում է, զ) բայ կազմում է, մակբայ է կամ՝ սոսկ արմատ:

2. Հնչյունափոխական երևույթները հոգնակիների կազմության ժամանակ:

3. Հնչյունափոխությունը հոլովման ժամանակ:

4. Հնչյունափոխությունը բառակազմության, բառաբարդման ժամանակ:

Մեր անցյալի ոչ մի հեղինակի մոտ հնչյունափոխության երևույթների այսպիսի սխառմատիկ և լայն ընդգրկումով շարադրանք չկա: Շատ կարևոր է նաև այն, որ հեղինակը փաստերը հավաքել է մեր նոր և նորագույն շրջանի գրականությունից:

Այս, իհարկե, բոլորովին չի նշանակում, թե ընկ. Առաքելյանի հոդվածում չկան թերություններ, անհամոզիչ բացատրություններ և սխալներ:

Նկատելի է, որ հեղինակը թերազնահատ վերաբերմունք է ունեցել մեր անցյալի լեզվաբանների և քերականների կատարած աշխատանքի նկատմամբ: Այդ երևում է ոչ միայն նրանից, որ հոդվածագիրը ոչ մի աեղ չի հիշում որևէ քերականի կամ լեզվաբանի անուն, որոնք այս կամ այն չափով զբաղվել են հնչյունափոխության հարցով, արել են արժեքավոր դիտողություններ, մշակել կանոններ, այլև նրանից, որ հեղինակը ուղղակի կերպով հայտարարում է. «Այստեղ մենք քննելու ենք մեր հնչյունափոխության երևույթները, որ ցարդ չի կատարված» (էջ 60): Նույն այս միտքը արտահայտել է մի քանի էջ հետո, դրելով. «Մեր աշխարհաբարի հնչյունափոխության օրենքները չեն ուսումնասիրված» (էջ 85): Այլ բան է, իհարկե, որ այն ձևով ու այն ընդգրկմամբ չի քննված, ինչպես քննության է առել ընկ. Առաքելյանը, բայց ասել, թե մեր լեզվի հնչյունափոխության երևույթները մինչև այժմ չեն քննված, այս, անշուշտ, ճիշտ չէ:

Ծիշտ չէ նաև հեղինակի հետևյալ միտքը.

«Մեր աշխարհաբարը այս մի հարյուրամյակի ընթացքում, սկսած այն օրից, երբ այն դարձավ գրական լեզու, իր քերականության բարելավումն ու կատարելագործումը, իր կանոնների ճշգրտումը ձեռք բերեց ֆերադանուբյան բալոթ բնագավառներում, այսինքն՝ հնչյունաբանության, ձևաբանության, որի մեջ մտնում են հոլովումն ու խոնարհումը, բառակազմությունը, և շարահյուսությունը, որի մեջ մտնում են շարադասությունը, նախադասությունների և բառերի կապակցությունները, դարձվածքների ու ոճերի մշակումն ու կուտակումը և, վերջապես, ընդհանուր ոճի բարելավումը» (էջ 60):

Ընկ. Առաքելյանը, ինչպես տեսնում ենք, քերականության մեջ մտցրել է հնչյունաբանությունը, բառակազմությունը, դարձվածքների ու ոճերի մշակումն ու կուտակումը, ոճի բարելավումը: Անվիճելի է, որ մանավանդ ոճաբանական որոշ երևույթներ կապվում են քերականության հետ, բայց այս ամենին էլ իրավունք չի տալիս մեզ քերականության մեջ մտցնելու այն ամենը, ինչ, մանավանդ, ընկեր Ստալինի աշխատություններից հետո, առանձնացվում են քերականությունից: Կարծում ենք, հոդվածագիրն ևս քաջ հայտնի է, որ ընկեր Ստալինը և այժմ բոլոր լեզվաբանները քերականություն անվան տակ նկատի են ունենում միայն լեզվաբանության երկու հիմնական բաժինները՝ ձևաբանությունը և շարահյուսությունը:

Հոդվածի մեջ կան հակասական մտքեր և որոշ անհետևողականություններ: Նա, օրինակ, գրում է. «Մեր լեզվի հնչյունական օրենքների զարգացումը դեռ լիակատար կերպով չի բարելավվել» (էջ 60): Այս գրածից պարզ երևում է, որ հեղինակն այն կարծիքին է, թե հայոց լեզվի հնչյունական օրենքները գտնվում են զարգացման մեջ, թե այդ օրենքների զարգացումը լիակատար կերպով պետք է բարելավվի: Սակայն, հակասելով իր այս

մտքին, ընկ. Առաքելյանը մի տասը էջ հետո հայտարարում է «...Մեր դրական լեզվի համար այսօր հնչյունափոխությունը ներքին օրինաչափություն չէ արդեն» (էջ 70): Եթե հեղինակը սրանով ցանկացել է ասել, թե հնչյունափոխական երևույթներն այժմ գործոն չեն, որ մեր հնչյունափոխությունը (խոսքը, իհարկե, շեշտի հետ կապված հնչյունափոխության մասին է) ավանդական է, հնչյունափոխության նոր երևույթ չի առաջանում այժմ, այս, իհարկե, ճիշտ է, բայց այս դեպքում պետք է պարզ շարադրվեր թե՛ առաջին միտքը և թե՛ երկրորդը:

Ճշտման ու պարզարանման կարիք ունի հեղինակի այն միտքը, թե բաղմավանկ բառերը եղակիում հոլովվելիս նույնպես չեն հնչյունափոխվում» (էջ 69), որովհետև ընկ. Առաքելյանը յուր այս կարծիքը հերքող իբ, իվ, շ, ս, իկ, ին, իչ, ին, իր-ով վերջավորություն ունեցող բառերի այնքան օրինակ է բերում (81 հատ), որ այդքանը չի կարելի բացառություն համարել:

Չի կարելի համաձայնել հեղինակի մեկ այլ մտքի հետ, այն, որ «...դրաբարը իր երկրարբառները հնչյունական օրենքները պարտադրել է մեր «գրական լեզվին» (էջ 80): Նախ՝ ի՞նչ է նշանակում «պարտադրել է»: Լեզուն հարկադրանքով, առանց նրա անհրաժեշտությունն ու կարիքն զգալու, լեզվական երևույթ չի կարող վերցնել ու դրանք դարձրել ընթացքում պահպանել: Երկրորդ՝ դրաբարյան երկրարբառները չեն, որ աշխարհաբարում տվել են երկհնչյուններ, ինչպես կարծում է հեղինակը, այլ մեր լեզվի մեջ դուրսընթացող հնչյուններն են, որոնք ընդհանուր խառնակությունն են առաջացրել» նրա մեջ: Լեզուն որևէ օրինաչափություն վերցնել, կամ ստեղծել կարող է միայն այն ժամանակ, երբ տվյալ դեպքում նա համարվում է առաջատար, պրոգրեսիվ, երբ զգում է նրա կարիքը. լեզուն չի կարող մի երևույթ օրինաչափություն գործնել, եթե այն ետադրմական է, եթե նա պետք է խառնակություն առաջ բերի: Անշուշտ, բոլորովին այլ բան է, երբ լեզվական որևէ երևույթ ապրում է իր դարը, հնանում է և հետագայում աստիճանաբար դուրս մղվում:

Ֆիլ. դիտ. թեկնածու Ն. Սանտաձեի «Հայոց լեզվի ուսումնասիրության հնդեվրոպական փուլի մի քանի հարցերի շուրջը» հոդվածում հիմնականում քննվում է երեք հարց, դրանք են՝ հայերենի հնդեվրոպական տեսությունը, հայերի և հայերենի գոյացման հարցի և սրա հետ կապված մի քանի խնդիրների շուրջը և հնդեվրոպական հայագիտությունից դրական ու բացասական մի քանի կողմերի շուրջը:

Ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատություններից հետո լեզուների, այդ թվում և հայոց լեզվի, պատմա-համեմատական մեթոդով կատարված ուսումնասիրությունների փերանյաման ու դնահստման հարցը միանգամայն հասկանալի պատճառով դարձել է անհրաժեշտ: Ընկ. Սանտաձեն փորձել է շատ սեղմ շարադրել հայերենի հնդեվրոպական տեսությունը, խմբավորել հնդեվրոպաբանների հայացքները, որոշ դեպքերում քննադատական խոսք ասել նրանց նկատմամբ, ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ գնահատել պատմա-համեմատական մեթոդով կատարված ուսումնասիրությունները և այլն: Նա ճիշտ կերպով նշում է, որ «պատմա-համեմատական մեթոդով աշխատող հայագետները քիչ գործ չեն կատարել հայոց լեզվի ուսումնասիրության... գործում» (էջ 110):

Հեղինակն անշուշտ ցույց է տալիս նրանց դրական գործը, մի շարք փաստեր է բերում հայերեն և հնդեվրոպական լեզուների մեջ եղած ընդհանրություններից:

Ընկ. Սանտաձեի հոդվածում նույնպես կան թերություններ ու սխալ մեկնաբանություններ:

Ամենից առաջ պետք է ասել, որ հեղինակը առաջին զլխում («Հայերենի հնդեվրոպական տեսությունը») իրար ետևից շարում է բաղմավիկ լեզվաբանների (Պոսանյուս, Պալլաս, Վինդիշման, Պոտտ, Բենֆայն, Մյուլլեր, Լադարդ և այլն) տեսակետներն ու աշխատությունների վերնագրերը, սակայն համարյա քննադատական խոսք չի ասում նրանց նկատմամբ: Հոդվածն ավելի կշահեր, եթե այսքան լեզվաբանների անուններ ու տեսակետներ թվարկելու փոխարեն, հեղինակը կատարեր որոշ խմբավորում, վերցնել միայն մեկ-երկու բնորոշ տեսակետներ և կոնկրետ կերպով ցույց տար նրանց դրական ու բացասական կողմերը: Այս գլխի տակ հեղինակն ավելի շուտ սխեմատիկ կերպով ներկայացրել է այդ գիտնականների անունների և աշխատությունների վերնագրերի հաջորդական շղթան, քան հայերենի հնդեվրոպական տեսությունը, ինչպես վերնագրված է:

Այնուհետև, հեղինակը բերում է պատմա-համեմատական մեթոդի կողմից հայտնաբերված հայերեն և հնդեվրոպական լեզուների մեջ եղած ընդհանրությունների, դարպասման օրինաչափությունների ինը օրինակ, որոնցից վեցը հնչյունական են, մինչդեռ հեղինակը հայտարարում է «Քեռականական այս և նման բազմաթիվ ձևեր միանգամայն օրինաչափ են...» (էջ 112): Ձգիտենք, ինչ է նկատի ունեցել հեղինակը, որ այսպես է գրել, բայց մի բան բոլորիս, այդ թվում և հոգվածագրին, շատ հայտնի է, որ քերականական և հնչյունական երևույթները տարբեր բան են և իրար հետ չպետք է խառնել:

Ընկ. Սանտաձեն հին հայագիտության թերություններից մեկը համարում է այն, որ նա «...նկատի է ունեցել միայն հայերենի հնդեվրոպական տեսությունը, անտեսել է կովկասյան և փոքր-ասիական լեզվական տարբերի առկայության բազմաթիվ փաստերը հայերենում...» (էջ 107): Հեղինակի այս միտքը խիստ կարոտ է հաստատման և ապացուցման: Իման այն է, որ ընկ. Սանտաձեն իր այս գրույթին ինքն էլ չի հավատում: Այդ երևում է նաև նրանից, որ այս մասին նա միայն մի փոքրիկ հայտարարություն է անում, որն իր հոգվածի ամբողջ ոգու հետ չի էլ կապվում: Հեղինակի օգտագործած բազմաթիվ փաստերն ու գրույթները մեզ և հեղինակին այն համոզմանն են բերում, որ հայոց լեզուն հնդեվրոպական լեզու է: Հեղինակը հենց այդպես էլ հայտարարում է. «...Երբեք չի կարելի ժխտել հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը, որը գիտական հարց է և բազմաթիվ լեզվաբանական ու պատմական փաստերով ստուգված անառարկելի ճշմարտություն է» (էջ 99):

Ընկ. Սանտաձեն իր հոգվածի մի քանի գլուխների վերջում տալիս է որոշ ամփոփում. այս, իհարկե, լավ է, բայց շատ ավելի լավ կլիներ, եթե յուրաքանչյուր գլխի նկատմամբ այդպես վարվեր: Սակայն նա երբեմն ամփոփում է այնպիսի բան, որի մասին ավյալ գլխում չի էլ խոսել: Այսպես, օրինակ՝ երկրորդ գլխի ամփոփման մեջ կարդում ենք. «Հին հայագիտության տեսական սկզբունքները հետևյալներն են...» և թվարկում է, որոնց մեջ նաև՝ «գ) հայերեն լեզուն, հնդեվրոպականից ունենալով մոտ 713 արմատ, հարևան ժողովուրդներից փոխ է առել մի քանի հսկար արմատներ, չվերցնելով բառակազմական ոչ մի ձև» (էջ 106): Մինչդեռ շարագրանքի մեջ հեղինակը բոլորովին չի խոսում բառակազմական ձևեր չվերցնելու մասին:

Ընկ. Սանտաձեի հոգվածում կան կրկնություններ (էջ 100, 102 և այլն), անճիշտ ձևակերպումներ: Այսպես՝ 117-րդ էջում գրում է. «...Նրանք (Ն. Յա. Մառը և Նրա հետևորդները, — Ա. Գ.) պատմա-համեմատական մեթոդը նշավակում էին նաև նրա համար, որ նա «մղում է գեպի աշխատանք, գեպի լեզուների ուսումնասիրությունը»:

«Ի. Վ. Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունները, որոնք ամուր կերպով գրեցին իսկական սարճախոսական լեզվաբանության հիմքերը, սովետական գիտությունը վերջնականապես ազատեցին «սրճի մրուրի մեջ գուշակություն անելուց»:

Նախ՝ Ն. Մառը և Նրա հետևորդները երբեք չէին կարող պատմա-համեմատական մեթոդը նշավակել՝ այն բանի համար, որ նա «մղում է գեպի աշխատանք, գեպի լեզուների ուսումնասիրությունը»: Հեղինակը ընկեր Ստալինի աշխատություններից բերված այս միտքը սխալ կերպով է կապել իր նախադասության հետ:

Երկրորդ՝ միանգամայն սխալ է ասել, թե ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունները «...սովետական գիտությունը վերջնականապես ազատեցին սրճի մրուրի մեջ գուշակություն անելուց»: Ամենամեղմ կերպով ասած՝ սա վիրավորանք է սովետական գիտության հասցելուն: Լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի այս ասածը երբեք չի կարելի տարածել սովետական գիտության վրա: Անշուշտ, հեղինակն էլ այդ գիտի, սակայն նախադասության սխալ ձևակերպման շնորհիվ ստացվել է բոլորովին այլ բան:

Հայ բարբառագիտության հարցերին է նվիրված ֆիլ. գիտ. թեկնածու Հ. Մկրտչյանի «Հայ բարբառագիտության մի քանի հարցեր Ի. Վ. Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ» հոգվածը:

Ամենից առաջ պետք է ասենք, որ ընկ. Մկրտչյանի այս աշխատությունը ժողովածուի ամենահաջող հոգվածներից մեկն է:

Հեղինակը առաջին անգամ փորձել է ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ քննել ընդհանրապես բարբառագիտության և, մասնավորապես, հայ բարբառագիտության մի քանի կարևոր հարցեր, ինչպես, օրինակ՝ բարբառների զարգացման տարբեր էտապների՝ կապված հասարակության զարգացման պատմության հետ, բարբառների առա-

ջացման, 5-րդ դարում հայ բարբառների գոյություն, հայ բարբառների դասակարգման և այլ հարցեր:

Հեղինակը բոլոր հարցերում ընդհանուր առմամբ կանգնած է ճիշտ տեսակետի վրա: Նա միանգամայն ճիշտ դիրքերից է քննադատում հայ բարբառագիտության մեջ անցյալում արտահայտված մի քանի կարծիքներ ու տեսակետներ, ինչպես, օրինակ՝ հայ բարբառների առաջացման, 5-րդ դարում հայ բարբառների գոյություն, գրաբարի և բարբառների փոխարարելիության մասին:

Այս հոդվածում նույնպես կան որոշ թերություններ:

Քանի որ հոդվածի վերնագիրն է «Հայ բարբառագիտության մի քանի հարցեր...», ուստի, մեր կարծիքով, հեղինակն ավելի լավ կաներ, եթե լեզվի մասին այդքան մանրամասն տեսակետներ ներկայացնելու փոխարեն խոսեր բարբառների և, հատկապես, հայ բարբառագիտության խնդիրների մասին, ավելի մանրամասն խոսել: հենց այն հարցերի մասին, որոնց վրա կամ կանգ չի առել, կամ որոնց մասին հապճեպ մի քանի խոսք է ասել:

Ընկ. Մկրտչյանի հոդվածում ևս նկատելի է այն թերությունը, որի մասին մենք խոսել ենք նախորդ մի քանի հոդվածների կապակցությամբ. նա վերցրել է լեզվի, ընդհանրապես բարբառագիտության և հայ բարբառագիտության բազմաթիվ հարցեր, և այս հնարավորություն չի տվել նրան անհրաժեշտ չափով խորանալու քննարկվող հարցերի մեջ: Բերենք մեկ օրինակ. խոսելով բարբառների առաջացման երկու ուղիների՝ բաժանման և միացման մասին, որ հայտնի է նաև այլ հեղինակների աշխատություններից, ընկ. Մկրտչյանը բավարարվում է միայն մի ընդհանուր հայտարարությամբ, այն, որ «բարբառների առաջացման այս երկու ճանապարհով են առաջացել նաև հայ լեզվի բարբառները» (էջ 145), և նույնիսկ մի օրինակ չի բերում իր այս կարծիքը հաստատելու համար:

Ընկ. Մկրտչյանը գրում է. «...էթնոսի կազմավորման պրոցեսում նրա կազմի մեջ մտնող ոչ ազգակից ցեղերը աստիճանաբար մերվում, ձուլվում են հաղթող ցեղի մեջ, կորցնում իրենց լեզուն, առանձին զեպքերում պահպանելով այդ լեզվի հատկապես հնչյունական որոշ առանձնահատկություններ, իրենց խոսվածքով կազմում էթնիկական լեզվի բարբառները» (էջ 142):

Այս բացատրությունից ոչ միայն չի կարելի պարզ պատկերացում կազմել էթնիկական լեզվի բարբառների առաջացման մասին, այլև կարելի է սխալ եզրակացության հանգել:

Հեղինակի այս միտքը պարզաբանելուց կարելի է հետևյալ տեսակետին հանգել. ոչ ազգակից ցեղերը ձուլվում են հաղթող լեզվի մեջ, այսինքն՝ կորցնում են իրենց ինքնուրույնությունը և յուրացնում են հաղթող լեզուն՝ նրա քերականական կառուցվածքն ու բառային կազմը, այդ պարտված լեզուն պահպանում է միայն հնչյունական որոշ առանձնահատկություններ: Իսկ սրանով դրանք կարող են վերածվել բարբառի, չէ՞ որ հնչյունական տարբերությունը դեռևս շատ քիչ է, ապա որն է այժմ բարբառի վերածված նախկին լեզվի քերականական կառուցվածքը, ինչպիսի՞ բառապաշար է ունենում նա: Չէ՞ որ ստալինյան ուսմունքի համաձայն յուրաքանչյուր տեղական (ատերիտորիալ) բարբառ ունենում է յուր քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը:

Ընկ. Մկրտչյանն, ահա, այս պետք է ցույց տար և համոզեր, թե ինչպես ազգակից ցեղերի լեզուները դառնում են բարբառներ, այլապես միայն հնչյունական տարբերությամբ բարբառի առաջացում կամ գոյություն չի կարելի հաստատել:

Ընկ. Մկրտչյանը շարադրելով ընկեր Ստալինի այն միտքը, որ տեղական բարբառները ազգերի գոյացման պրոցեսում կարող են հիմք հանդիսանալ ազգային լեզուների կազմավորման համար, նշում է, որ նույն այդ բանը տեղի է ունեցել նաև մեզ մոտ՝ Հայաստանում, որտեղ հայ դրական լեզվի հիմքում ընկած է Արարատյան բարբառը: Այդ, իհարկե, ճիշտ է, բայց հոդվածագիրը այդ մասին իր կարծիքը հայտնել է որոշ վերապահությամբ, գրելով՝ «Այդպես է տեղի ունեցել նաև հայոց լեզվի Ում ճյուղի բարբառներից, հատկապես Արարատյան բարբառի հետ, որն իր լեզվական ատաղձով ընկած է մեր դրական լեզվի հիմքում և այժմ դարձել է ամբողջ հայության ազգային լեզուն» (էջ 129):

Մենք կարծում ենք, որ այսպիսի մշուշապատ և երկիմաստ կարծիքը փոխանակ հարցը պարզելու, ավելի է խճճում. ինչ է նշանակում «հատկապես Արարատյան բարբառը», եթե հեղինակը այլ բարբառներ ևս նկատի ունի, որոնք այս կամ այն չափով դեռ են խաղացել մեր դրական լեզվի կազմավորման պրոցեսում, ապա այդ մասին պետք է որ պարզ գրեր: Միանգամայն ճիշտ է պրոֆ. Ղափանցյանի այն կարծիքը, որ մեր

գրական լեզվի հիմքը կազմում է Արարատյան բարբառը, «բայց ոչ բարբառների որևէ խառնուրդ» (էջ 14):

Ընկ. Մկրտչյանի մի քանի արտահայտություններ կամ պարզ չեն և կամ ուղղակի սխալ են: Օրինակ՝ Մառը և նրա հետևորդները «խոսքի բոլոր տեսակներն ու ենթատեսակները օժտում էին դասակարգայնությամբ» (էջ 126):

Կամ՝ «ներանք (ժարգոնները) ունեն հասարակական ԵՐՋԱՆԱՍՏԱԹՅԱՆ նեղ ոլորտ» (էջ 127):

Աշխատությունների ժողովածուն ավարտվում է ֆիլ. դիտ. թեկնածու Ն. Հարությունյանի «Ն. Յա. Մառի ուրարտագիտական աշխատությունների մի քանի սխալների մասին» հոդվածով:

Այս հոդվածը իր բնույթով քննադատական է, որի մեջ հեղինակը քննադատում է Ն. Յա. Մառի սխալ ստուգաբանություններն ու բացատրությունը՝ ուրարտական մի քանի բառի օրինակի վրա: Պետք է ասել, որ ընկ. Հարությունյանը բավականաչափ փաստեր է բերում և համոզիչ է դարձնում իր բացատրությունները:

Մեր կարծիքով, հոդվածագիրը սխալ է թույլ տվել մեկ հարցում:

Ընկ. Հարությունյանը այն կարծիքն է հայտնում, որ Ն. Յա. Մառը տալիս էր «ուրարտերեն բառերի բռնազրոսիկ ստուգաբանություն», այսպես կոչված, լեզվի նոր ուսմունքի սկզբունքներից ելնելով (էջ 157):

Բանն այն է, որ ընկ. Հարությունյանը քննադատել է Մառի 1915, 1916, 1917 թթ. հրատարակված աշխատություններում եղած ստուգաբանությունները, այսինքն, այն թվականների, երբ, այսպես կոչված, լեզվի «նոր ուսմունք» դեռևս չկար: Հարց է առաջանում. ինչպես կարող էր պատահել, որ Ն. Մառը ուրարտերեն բառերի բռնազրոսիկ ստուգաբանություններ տար՝ ելնելով դեռևս գոյություն չունեցած իր «լեզվի նոր ուսմունքի» սկզբունքներից: Որ կարող էր Ն. Մառը սխալ, բռնազրոսիկ, անընդունելի բացատրություն տված ինեւ ուրարտական այս կամ այն բառին, այս, իհարկե, հնարավոր է, և ընկ. Հարությունյանը բավական համոզիչ ցույց է տալիս այդ, բայց ինչ կապ ունի այս տեղ լեզվի նոր ուսմունքը: Ն. Յա. Մառի և նրա հետևորդների ամեն մի սխալը չի կարելի մեխանիկորեն կապել լեզվի նոր ուսմունքի հետ:

Ամփոփելով, պետք է նշենք, որ Լեզվի ինստիտուտի կյանքում «Լեզվաբանական և հայագիտական հետադոտությունների» առաջին հատորը ստալինյան լեզվաբանական ուսմունքի ոգով գրված գիտական առաջին ժողովածուն է: Նա ընդհանուր առմամբ հաջողված է: Նրա մեջ հատկապես հայագիտական մի շարք հարցեր ներկայացվել ու քննվել են նոր և ճիշտ մոտեցմամբ:

Ժողովածուի ուսումնասիրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ որոշ հոդվածներում կան ոչ քիչ թերություններ ու սխալներ, որ առանձին հեղինակներ դեռևս լավ չեն ըմբռնել մարքսիստական լեզվաբանության դրույթներն ու պահանջները:

Ստալինյան լեզվաբանական հանճարեղ աշխատությունները ամենալայն հեռանկարներ են բացել լեզվաբանության և հայագիտության հետագա զարգացման համար:

Հասկանալի է, որ մեր լեզվաբանները մարքսիզմ-լենինիզմի խոր տիրապետմամբ, ստալինյան հանճարեղ դրույթների լավ յուրացմամբ և սեփական սխալների ու թերությունների բացահայտմամբ ու վերացմամբ միայն կկարողանան տալ արժեքավոր ու անթերի աշխատություններ և դրանով իսկ զարգացնել ու առաջ մղել լեզվաբանական գիտությունն ու հայագիտությունը մեր ռեսպուբլիկայում:

Լեզվի ինստիտուտի առաջ դրված է լուրջ և պատասխանատու խնդիր՝ գինված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության դրույթներով, շարունակել պայքարը Մառի և նրա աշակերտների հակագիտական, իդեալիստական «տեսությունների» դեմ, բացահայտել սովետահայ լեզվաբանության մեջ տեղ գտած մառական սխալները, մինչև վերջը լիկվիդացնել, արմատախիլ անել դրանք և սովետական լեզվաբանությունն ու հայագիտությունը հարստացնել արժեքավոր նոր աշխատություններով:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ